ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Երևան-0010, Հանրապետության հր. Կառավարական տուն 3

"27" 09 2021թ. N 50-Լ

ՀՐԱՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 47-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 659-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 19-րդ կետի 14-րդ և 20-րդ ենթակետերը և Հայաստանի Հանրապետության վարչապետի 23.09.2021թ. N 02/11./32847-2021 հանձնարարականը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2019 թվականի դեկտեմբերի 27-ի <<Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության աշխատանքային կարգապահական ներքին կանոնները հաստատելու մասին>> N 47-Լ հրամանով հաստատված հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) Հավելվածի 11-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ՝ <<11. Նախարարությունում գործում է աշխատողների աշխատանքի հաճախումների էլեկտրոնային համակարգ:>>:

2) Հավելվածը լրացնել նոր 20.1.-ին կետով հետևյալ բովանդակությամբ՝ <<20.1. Նախարարության անձնակազմի կառավարման բաժինը պարտավոր է՝

1) ապահովել բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին օրենսդրությամբ, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2020 թվականի օգոստոսի 4-ի N 17-Ն հրամանով սահմանված՝ աշխատանքի (ծառայության) ներկայանալու անհրաժեշտ պայման հանդիսացող փաստաթղթերի ստուգումը Նախարարությունում հանրային պաշտոն զբաղեցնող, հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող, քաղաքացիական աշխատանք կատարող կամ տեխնիկական սպասարկում իրականացնող անձի աշխատանքի (ծառայության) ներկայանալիս,

2) ապահովել սանիտարահամաճարակային անվտանգության կանոններով սահմանված համապատասխան գրանցամատյանների վարումը, դիտարկումների իրականացումը,

3) համապատասխան սանիտարահամաճարակային անվտանգության կանոնների խախտում հայտնաբերելու դեպքում՝ առերևույթ խախտում թույլ տված անձի վերաբերյալ տվյալները մեկօրյա (աշխատանքային) ժամկետում ներկայացնել տվյալ անձին կարգապահական պատասխանատվության ենթարկելու (կարգապահական տույժ կիրառելու) իրավասություն ունեցող պաշտոնատար անձին կամ խախտում թույլ տված անձի անմիջական ղեկավարին (վերադասին), որն էլ պարտավոր կլինի խախտման մասին մեկօրյա (աշխատանքային) ժամկետում տեղեկացնել կարգապահական պատասխանատվության ենթարկելու (կարգապահական տույժ կիրառելու) իրավասություն ունեցող անձին:>>:

4) Հավելվածի 21-րդ կետի <<20-րդ կետով>> բառերը փոխարինել <<20-րդ և 20.1-րդ կետերով>> բառերով,

5) Հավելվածի 23-րդ կետը լրացնել նոր 9.1-ին ենթակետով հետևյալ բովանդակությամբ՝ <<9.1) աշխատանքի (ծառայության) ներկայանալիս անձնակազմի կառավարման բաժին ներկայացնել բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին օրենսդրությամբ, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2020 թվականի օգոստոսի 4-ի N 17-Ն հրամանով սահմանված՝ աշխատանքի (ծառայության) ներկայանալու անհրաժեշտ պայման հանդիսացող փաստաթղթերը:>>:

6) Հավելվածը լրացնել նոր 31.1.-ին կետով հետևյալ բովանդակությամբ՝ <<31.1. Մինչև 23-րդ կետի 9.1-ին ենթակետով նախատեսված պարտականության խախտումը վերացնելը յուրաքանչյուր աշխատանքային օր աշխատանքի (ծառայության) ներկայանալը համարվում է (դիտվում է) որպես առանձին (ինքնուրույն) կարգապահական խախտում:>>:

7) Հավելվածը լրացնել նոր 31.1.-ին կետով հետևյալ բովանդակությամբ՝ <<33.1. Սույն կարգի 23-րդ կետի 9.1-ին ենթակետով պարտականության խախտման համար վարել ծառայողական քննություն և ծառայողական քննության (կարգապահական վարույթի) ընթացքում քննարկվող խախտման մասին մեկօրյա (աշխատանքային) ժամկետում գրավոր բացատրություն (զեկուցագիր և այլն) պահանջել խախտում կատարած աշխատողից:>>:

27.09.2021

X

ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐ՝ Signed by: SANOSYAN GNEL 1710830069 **Գ. ՍԱՆՈՍՅԱՆ**

գ. Երևան